

**ՋՐՈՍԱԶՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

(Կնքման վայրը)

(Կնքման ամսաթիվը)

«Գառնիկ Ուլիխանյան» Ա/Ձ այսուհետ «Կատարող», ի դեմս հիմնադիր տնօրեն Գառնիկ Ուլիխանյանի (վկ. 01²123694, տրվ. 10.09.1996, 018) մի կողմից, և հետագայում՝ «Պատվիրատու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով՝ «Կատարողը» պարտավորվում է «Պատվիրատուի» հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, այսուհետ՝ «Ծառայություններ», իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Մատուցվող ծառայությունները ներառում են.

1. _____
(Ջրոսաչրջիկի տեղաբաշխման վայրը և/կամ/ շրջագայության երթուղին)
2. _____
(Ջրոսաչրջային երթուղու տևողությունը կամ զրոսաչրջային փաթեթում ընդգրկված ժամկետները)
3. _____
(Տրանսպորտային միջոցների տեսակը, դասակարգումը, ժամանման ու մեկնման նախնական ժամկետները, ժամերն ու վայրերը)
4. _____
(Ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը, կարգը)
5. _____
(Սննդի կազմակերպման և մատուցման ծառայության հաճախականությունը, պայմանները)
6. _____
(Տեսարժան վայրերի այցելության ծրագրերը, երթուղիները և փաթեթի գնի մեջ ներառված այլ ծառայությունները) (թվարկել ծառայությունները)
7. _____
(Այլ ծառայություններ)

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանավորված ժամկետներում՝ համաձայն «Կատարողի» կողմից սահմանված ընթացակարգի:

2.1.2. Ջրոսաչրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների վերաբերյալ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

- Անձնագրային, մուտքի և ելքի պահանջների
- Ժամանման կամ տարանցիկ երկրներում՝ առողջության հետ կապված սահմանափակումների և պահանջների (անհրաժեշտ ներարկումներ և այլն)
- Տրանսպորտային տուրքերի և հատուկ գանձումների
- Ուղևորային փոխադրումների ընթացքում պահանջվող մաքսային սահմանափակումների
- Դրամային փոխարժեքի
- Դժբախտ պատահարների դեպքում ինչպես նաև առողջության ու կյանքի ապահովա-

- գրության հետ կապված պահանջների կամ երաշխավորությունների մասին
- Տեղեկացնել իր այն գործընկերների գտնվելու վայրը (հասցեները) և հեռախոսահամարները, որոնց զբոսաշրջիկները կարող են դիմել անմիջապես.

2.2 «Պատվիրատուն» պարտավոր է ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում,

2.2.1 պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները

2.2.2. հարգել ժամանման երկրի (տեղանքի) ավանդույթները, սովորույթները, կրոնական հավատալիքները

2.2.3. չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և կատարել ժամանման երկրի տարածքում գործող օրենքների պահանջները:

2.3 . «Պատվիրատուն» իրավունք ունի ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում՝

2.3.1. ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները

2.3.2. անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանություն

2.3.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում

2.3.4. իր համար հասկանալի լեզվով «Կատարողից» ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն՝ ժամանման երկրի (վայրի) զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և բնակվելու կանոնների, տեղաբնակների սովորույթների, հասարակական ու կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության պայմանների մասին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1 Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների (Ջբոսաշրջային փաթեթի) պայմանագրային գինը կազմում է _____ ՀՀ դրամ ներառյալ հարկերը, որից միայն հյուրանոցային ծառայության արժեքը կազմում է _____ ՀՀ դրամ:

3.2. «Պատվիրատուի» պատվերը «Կատարողի» կողմից հաստատելուց հետո, «Պատվիրատուն» պարտավոր է վճարել պայմանագրային գինը «Կատարողին»՝ փոխանցելով այն վերջինիս հաշվարկային հաշվին կամ վճարել կանխիկ:

3.3. Պատվերը երկկողմ հաստատելուց հետո, «Պատվիրատուի» կողմից Կատարողին վճարված գումարները ենթակա չեն վերադարձի, եթե պատվերը կողմերի միջև սահմանված ժամկետներից ուշ, լրիվ կամ մասնակի չեղյալ է հայտարարվել Պատվիրատուի կողմից:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. «Կատարողի»՝ օրենքին հակասող գործողություններով «Պատվիրատուին» հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում «Պատվիրատուն» պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՕՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

